

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՈՒԴԻՏ»  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA  
«ECONOMICS-AUDIT»  
LIMITED LIABILITY  
COMPANY

Աուդիտորական ծառայությունների իրականացման **Լիցենզիա ԱԾ N 085**  
Տրված՝ 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից  
378240, ՀՎՀՀ 01572702, հ/հ 15100-11308230100  
ք. Երևան, Խանջյան 47/8

## Անկախ աուդիտորի Եզրակացություն

### «ՍԼԼ ԻՆՂԱՍԹՐԻՋ» ՄՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՍԼԼ ԻՆՂԱՍԹՐԻՋ» ՄՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական նյութերի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

#### *Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը*

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

#### *Աուդիտորի պատասխանատվություն*

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհարժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Չձևափոխված կարծիք*

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2016թ. Ապրիլի 26  
Տնօրեն  
Արմինե Գրիգորյան



Աուդիտոր  
Վաչե Հովսեփյան  
*[Handwritten Signature]*

# "ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԶ" ՍՊԸ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար. դրամ

	Ծանոթ.	2015թ	2014թ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ		266,219	223,235
Կենսաբանական ակտիվներ			
Ներդրումային գույք			
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ		513	486
Բաժնեմասնության մերթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ		2,643	3,822
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<i>269,375</i>	<i>227,543</i>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		952,916	417,362
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		236,357	867,727
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով		43,301	
Ընթացիկ ֆինանսական ներդրում		88,691	
Մնացորդներ բանկերում և դրամարկղում		190,449	38,683
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ		14,454	1,805
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<i>1,526,168</i>	<i>1,325,577</i>
<i>Ընդամենը ակտիվներ</i>		<i>1,795,543</i>	<i>1,553,120</i>

Տնօրեն՝

Ա. Միքայելյան

Գլխավոր հաշիվապահ

Ա. Գրիգորյան



# "ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԶ" ՍՊԸ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Հազար դրամ


	Ծանոթ. թ.	2015թ	2014թ
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ		50	50
Վերագնահատման պահուստ			
Կուտակված շահույթ (վնաս)		281,099	264,655
Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարեր			
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>281,149</b>	<b>264,705</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		295,645	750,707
Ակտիվներին վերաբերող շնորհներ			
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Այլ պարտավորություններ և ծախսումների գծով պահուստներ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>295,645</b>	<b>750,707</b>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		1,203,407	496,676
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն			21,920
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով		13,336	19,112
Այլ ընթացիկ պարտավորություններ		2,006	
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,218,749</b>	<b>537,708</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>1,795,543</b>	<b>1,553,120</b>

Տնօրեն՝

Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ

Ա. Գրիգորյան





# "ՄԼԼ ԻՆԴԱՍՏՐԻՉ" ՍՊԸ

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծան ոթ.	2015թ	2014թ
Հասույթ		2,530,530	3,126,115
Վաճառքի ինքնարժեք		2,267,630	2,411,904
<b>Համախառն շահույթ(վնաս)</b>		<b>262,900</b>	<b>714,211</b>
Այլ եկամուտներ		12,447	1,121
Իրացման ծախսեր		46,739	48,865
Վարչական ծախսեր		173,491	159,109
Այլ ծախսեր		10,889	46,098
<b>Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)</b>		<b>44,228</b>	<b>461,260</b>
Ֆինանսական ծախսեր		18,568	132,059
<b>Շահույթ(վնաս) մինչև հարկերը</b>		<b>25,660</b>	<b>329,201</b>
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)		9,216	66,589
<b>Տարվա շահույթ(վնաս)</b>		<b>16,444 #</b>	<b>262,612</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			-
Ակտիվների վերագնահատման աճ (նվազում)			-
<b>Ընդամենը համապարփակ արդյունք</b>		<b>16,444</b>	<b>262,612</b>

Տնօրեն՝

Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ

Ա. Գրիգորյան

